«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻՆ». ԵՐԿՕՐՅԱ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

03.07.2024 18:31

ՀՀ փաստաբանների պալատի և ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի համագործակցության շրջանակներում հանրային պաշտպանների համար իրականացվել է «Իրավաբանական օգնության տրամադրումը ապաստան հայցողներին» թեմայով աշխատաժողով:

Բանախոսությամբ հանդես են եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր, փորձագետ Արսեն Նիկողոսյանը, ՄԱԿ ՓԳՀ ներկայացուցիչ Մարինե Անտոնյանը:

Ներկա են եղել նաև Փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Լուսինե Սարգսյանը և Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը:

Աշխատաժողովին քննարկվել են մի շարք առանցքային հարցեր ինչպիսիք են՝ Ապաստան հայցողների հետ արդյունավետ հաղորդակցությունը, Իրավաբանական օգնության չափանիշներն ապաստանի վարույթում, Ապաստանի իրավունքի ներպետական և միջազգային պաշտպանության հիմնական չափանիշներն ու սկզբունքները և այլն:

Քննարկումների ընթացքում իրականացվել է նաև միջազգային պաշտպանության կարիքների գնահատում:

Նշենք նաև, որ աշխատաժողովն իրականացվել է Աղվերանում՝ Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի ներկայացուցչության (UNHCR կամ ՄԱԿ ՓԳՀ) հետ համագործակցությամբ իրականացվող «Իրավաբանական աջակցություն բռնի տեղահանված անձանց» ծրագրի շրջանակներում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })